

մը եղած էր: Մեծ ու պղտիկ յայտնի չէր, ուխտաւոր-հաւատացեալները պաղած վհատած էին. ամէն կողմէն շեշտուած անվստահութիւնը անթաքչելի զեղծումներու հանդէպ՝ լքում բերած էր ամէնէն բարի սրտերու ալ: Երուսաղէմի մէջ հայ բուռիլ ամէնէն սարսափելի նախատինքն էր: Երկիւղածութիւն թելադրող ամէն սրբութիւն, բարեպաշտութիւն արծարծող ամէն յիշատակ, քրիստոնէութիւն ներշնչող ամէն աւանդութիւն եւ իրականութիւն մխտուած էին իրենց դրական եւ բարոյական կալուածներուն վրայ: Եւ Երուսաղէմ, որուն ուխտաւորը ըլլալ գերագոյն պարծանքն էր հայ քրիստոնէին, սրբապղծուած էր. մրգապահներու տաղաւարին պէս քայքայուած էր Սիօնի դշտոյն: Հայ բարքերու մէջ կեանքն երեք երջանկութիւններով կ'եզրուէր. Առաջին՝ Տուն տեղ չինել. Երկրորդ՝ մանչ զաւակ կարգել. Երրորդ՝ Երուսաղէմ ուխտի երթալ: Շիրիմէն ասդին շիրիմէն անդին պահուրտած երջանկութեան այս երեքութիւնը վայելել՝ այս էր ահա կեանքի յաբացոյցը Հայու վաղնջական բարքերուն մէջ: Բայց Երուսաղէմ ապականութեան մէջ լիկած էր այն ատեն:

Անկումն ու քայքայումը այնչափ խորունկ, այնչափ գէշ էր՝ որ ամէն մարդու գործը չէր անձնանուիրուիլ եւ անոր մէջը նետուիլ: Ազամանդի պէս ամուր նկարագիր մը պէտք էր. վասն զի ժանգոտած երկաթի պէս զգուելի կոյտ կոյտ տկարութիւններու մէջ պիտի մտնէր. պիտի հանդիպէր դժուարութիւններու, որոնք կը նմանէին ծովեզերքի վրայ կանանչ եւ լպրծուն մամուռներով ցցուած ժայռերու, որոնց վրայ կարելի չէ կռուան մը գտնել ոտքի. ժայռեր՝ որոնք նշաւակ ալքերներու ծեծ ու կոծին՝ ծովէն եկող ցամաքէն վաղող բոլոր աղտեղութիւնները ծծած, բոյն եղած են ճծիներու ու խեցիներու: Պիտի մտնէր սրբա-